տանի Վանի հնավայրի պեղումներից հայտնաբերված ոսկե վարսակալի մասին, որի շեղանկյունաձև ծայրերի վրա դրվագված պատկերները հնարավորություններ են ընձեռում կուլտուրապատմական կարգի մի շարք դատողությունների համար։ Զեկուցողի կարծիքով հիշյալ իրը արտացոլում է Կողբիսի և Իրանի միջև գոյություն ունեցող մշակութային կապերը, քանի որ դրվագված պատկերները հիշեցնում են Ziվիեի, ինչպես նաև մարական ու աքեմենյան ժամանակաշրջանի արվեստի այլ գործերի վրա հանդիպող դեղարվեստական սկզբունքները։

Յու. Մ. Դադոչիձեն (Թբիլիսի) պատմեց մ. թ. ա. V—III դարերի Արևելյան Վրաստանի խեցեգործության մասին, որը, որակապես տարբերվելով նախորդ ժամանակաշրջանների խեցեղենից, կրել է ուրարտական և իրանական խեցեգործության ազդեցությունը։ Ներկաները մեծ հետաքրքրությամբ դիտեցին նույն այդ ժամանակաշրջանին վերաբերող գունազարդ կավանոթների մի քանի նմուշների նկարները։

Ի. Դ. Ալիևը (Բաքու) հնագիտական, հատկապես դամբարանային նյութերի հիման վրա վերականգնել էր ալանա-սարմատական ցեղերի ճանապարհը Հյուսիսային Կովկասից մինչև Իրան։ Զեկուցողի կարծիքով այդ ճանապարհի մի հատվածն էլ անցնում էր Կուր գետի հովտով, ինչպես այդ վկայում են Մինգեչաուրի պեղումները։

Գ. Խ. Սարգսյանի (Երևան) զեկուցման մեջ ցույց էր տրված, որ պարթևների պատմության որոշ բացեր հնարավոր է մասամբ լրացնել հայ վաղ միջնադարյան աղբյուրների և առաջին հերթին Մովսես Խորենացու «Հայոց պատմության» տվյալներով։

Կ. Լ. Հովհաննիսյանը (Երևան) կանգ առավ Էրեբունի—Արինբերդի աքեմենյան ժամանակաշրջանի հուշարձանների վրա (սյունազարդ դահլիճ, հրո տաճարներ և այլ նյութեր), որոնք միաբերան վկայում են այդ հոչակված ուրարտական կենտրոնի մեծ նշանակության մասին նաև հետագա դարերում։

Գ. Ա. Տիրացյանի (Երևան) զեկուցումը կապված էր Աքեմենյան Հայաստանի ներքին պատմության մի քանի հարցերի հետ (սատրապի հողային տիրույթներ, արքունիք ու գրասենյակը, սատրապության զինվորական կազմակերպությունը)։

Մի շարք զեկուցումներ նվիրված էին Իրանի վաղ միջնադարյան պատմությանը և մշակույթին Սասանյանների օրոք, ինչպես նաև միջինասիական մշակույթների հետ դրսևորվող առնչությունների ուսումնասիրման արդյունքներին։

Գիտական նստաշրջանին մասնակցում էր Իրանի գիտնականների պատվիրակությունը, որի մի շարք անդամներ հանդես եկան զեկուցումներով։

Ա. Նեգաճբանը պատմեց Մարլիկում իր ղեկավարությամբ կատարված պեղումների մասին, որոնք տվել են ուշագրավ արդյունքներ։ Մարլիկի մշակույթը հայտնի է իր ինքնատիպությամբ և բազմազանությամբ, առանձին իրերի գեղարվեստական բարձր արժանիքներով։

Ս. Շաֆան, որը հայտնի է Իրանագիտության պատմության ասպարեզում կատարած ուսումնասիրություններով, կանգ առավ սովետական իրանագետների աշխատությունների գնահատման ու ընդհանրացման հարցերի վրա։

Նստաշրջանի կապակցությամբ Պետական Էրմիտաժը Արևելքի բաժնի ջանքերով Գեորգինյան դահլիճում կազմակերպեց իրանական նյութական մշակույթին և արվեստին նվիրված մեծ ցուցահանդես։ Էրմիտաժի աշխարհահռչակ նյութերի հետ միասին ցուցադրվել էին Միջին Ասիայի և Անդրկովկասի մի շարք թանգարանների նյութերը։ Այցելուները մեծ ուշադրությամբ էին դիտում Էրեբունիի թանգարանից բերված արծաթյա պտյակները (ռիտոնները), որոնք հայտնաբերվել էին 1968 թ. վերջերին Արինբերդի շրջակայքում։

Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ

ԲՅՈՒՂԱՆԴԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ XIV ԿՈՆԳՐԵՍԸ

1971 թ. սեպտեմբերի 6—12-ը Բուխարեստում կայացավ բյուզանդագետների միջազգային XIV կոնգրեսը։ Նրա աշխատանքներին մասնակցեցին աշխարհի ավելի քան 30 երկրներից շուրջ 680 մասնագետներ, այդ թվում ՍՍՀՄ-ից՝ մոտ 40 հոգի։ Կոնգրեսը ակնբախ կերպով ցուցադրեց բյուզանդագիտության բուռն զարգացումը ամբողջ աշխարհում։

Ռումինական Սոցիալիստական Հանրապետության Պետական խորհրդի նախագահ Ն. Չաուշեսկուի՝ կոնգրեսի մասնակիցներին ուղղված ուղերձում ընդգծված էր այն նշանակությունը, որ ունի անցյալի պատմության ուսումնասիրությունը, մասնավորապես բյուզանդագիտությունը, հատկապես այն ժողովուրդների համար, որոնք ժամանակին կրել են բյուզանդական

մշակույթի և քաղաքակրթության ազդեցությունը։

Կոնգրեսին ուղղված ողջույնի խոսքով հանդես եկան Ռումինական Սոցիալիստական Հանրապետության հասարակական և քաղաքական գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Մ. Կոստանտինեսկուն, XIV կոնգրեսի կազմկոմիտեի գլխավոր քարտուղար Մ. Բերզան, բյուզանդագետների միջազգային ասոցիացիայի նախագահ Պ. Լեմերլը, անվանի բյուզանդագետներ Ս. Ռենսիմենը (Անգլիա), Վ. Ն. Լազարևը (ՍՍՀՄ), Գ. Ա. Օստրոգորսկին (Հարավսլավիա) և ուրիշներ։

Կոնգրեսում քննարկման էր դրված չորս մեծ թեմա. 1) Բյուզանդական հասարակությունը և մտավոր կյանքը XIV դարում (զեկ. Ի. Շևչենկո—ԱՄՆ), 2) Բյուզանդական կայսրության սահմանները և սահմանամերձ շրջանները VII—XII դարերում (ասիական սահմաններ. զեկ. Հ. Ալվայլեր—Ֆրանսիա), 3) Աշխարհիկ արվեստը Բյուզանդիայում (զեկ. Ա. Գրաբար— Ֆրանսիա), 4) Բյուզանդիան և Ռումինիան (զեկ. Ն. Ստանեսկու—Ռումինիա)։

Առաջին թեմայի առնչությամբ կից զեկուցումներով հանդես եկան Է. Վերները (ԳԴՀ, «Հասարակությունն ու մշակույթը XIV դարում։ Սոցիալ-տնտեսական հարցեր»), Յ. Մեյենդորֆը (ԱՄՆ, «Հասարակությունն ու մշակույթը XIV դարում։ Կրոնական հարցեր»), Հ. Ռ. Բեկը (ԳՖՀ, «XIV դարի հունական ժողովրդական գրականությունը»), Հ. Հունգերը (Ավստրիա, «Դասական տենդենցներ XIV դարի բյուզանդական գրականության մեջ») և Մ. Խաձիդակիսը (Հունաստան, «Կլասիցիզմը և ժողովրդական տենդենցները XIV դարում»)։

Երկրորդ թեմայի առնչությամբ հանդես եկան Զ. Վ. Ուդալցովան, Ա. Պ. Կաժդանը և Հ. Մ. Բարբիկյանը (ՍՍՀՄ), որոնց միացյալ զեկուցումը վերնագրված էր. «Բյուզանդական կայսրության արևելյան սահմանների սոցիալական ստրուկտուրան IX—XII դարերում»։ Զեկուցեցին նաև Ա. Պերտուզին (Իտալիա, «Պատմության և ավանդության միջև. ակրիտասներն ու զազիները Բյուզանդիայի արևելյան սահմաններում»), Ն. Իկոնոմիդիսը (Կանադա, «Բյուզանդիայի արևելյան սահմանների կազմակերպությունը X—XI դարերում և էսկուրիալի «Տակտիկոնը»), Դ. Օրոլենսկին (Անգլիա, «Բյուզանդական սահմանային դոտիներ և մշակութային փոխհարաբերություններ»)։

Երրորդ թեմայի կապակցությամբ կից զեկուցումներով հանդես եկան. Կ. Ռեկվիրը (Անգլիա, «Բյուզանդական գործվածքները»), Վ. Ֆոլբաիը (ԳՖՀ, «Աշխարհիկ արծաթագործությունը և փղոսկրագործությունը Բյուզանդիայում») և Ո. Ի. Պոդորեդովան (ՍՍՀՄ, «Բյուզանդական պատկերազարդ ժամանակագրությունների արտացոլումը Գեորգ Ամարտոլոսի ժամանակագրության Տվերյան (Տրոիցկյան) գրչագրում»), իսկ չորրորդ թեմայի կապակցությամբ հանդես եկան Վ. Ջորջեսկուն («Բյուզանդիան և ռումինական ինստիտուտները մինչև XV դարի վերջը»), Ի. Միրչան («Դրական կապերը Բյուզանդիայի և ռումինական շրջանների միջև»), Ի. Շտեֆանեսկուն («Ռումինա-բյուզանդական արվեստագիտական կապերը IV—XV դդ.։ Ուսումնասիրության ներկա վիճակը»— բոլորը Ռումինիայից)։

Այս չորս գլխավոր թեմաներից բացի, որոնց շուրջ սեկցիաներում կարդացվեցին մոտ 130 հաղորդումներ, գործում էին յոթ սեկցիա ևս, որտեղ օժանդակ և այլ գիտությունների հարցերին նվիրված հաղորդումներով հանդես եկան բազմաթիվ գիտնականներ։ Այդ սեկցիաներն էին. 1) Զեռագրագիտության, հնագրության, դիպլոմատիկայի, 2) Պապիրուսագիտության, արձանագրագիտության, պատմական աշխարհագրության, 3) Դրամագիտության, կնիքագիտության, 4) Հնագիտության և արվեստի, 5) Երաժշտագիտության, 6) Գիտության պատմության և 7) Տարբեր հարցերի։

Կարդացված զեկուցումներից և հաղորդումներից հայ ժողովրդի միջնադարյան պատմությանն էր առնչվում կոնգրեսի երկրորդ թեման՝ «Բյուզանդական կայսրության սահմանները և սահմանամերձ շրջանները VII—XII դարերում։ Ասիական սահմաններ» և այդ թեմայի շուրջ կարդացված կից զեկուցումներն ու հաղորդումները։ Հիմնական զեկուցող Հ. Ալվայլերը ուսումնասիրության էր ենթարկել Բյուզանդական կայսրության արևելյան սահմանների հարցը տարբեր ասպեկտներով։ Բյուզանդացիներն իրենց համարում էին քրիստոնյա այնպիսի մի ազգ, որի համար Կոստանդնուպոլիսը նոր Հռոմ էր, բայց միաժամանակ նոր Երուսաղեմ։ «Քրիստոնյա» տերմինը հոմանիշ էր «հռոմայեցու» (բյուզանդացու)։ Նրանց պատկերացմամբ Բյուզանդական կայսրության սահմաններում էր ապրում «քաղաքակիրթ աշխարհը», իսկ նրանից դուրս «բարբարոսական» աշխարհն էր։ Քաղաքական իմաստով սահմանն ընդգրկում էր Կոստանդնուպոլսին և նրա վեհապետին հավատարիմ աշխարհը, այդ թվում և սահմանամերձ շրջաններում առկա փոքր ինքնավար, բայց ոչ բյուզանդական իշխանությունները, որոնք «բարեկամ» և «դաշնակից» էին։ Զեկուցողն այնուհետև կանգ առավ «հարկային» սահմանների վրա։ Նշելով, որ կայսրության քաղաքական

սահմանները նախ և առաջ նրա վարչական սահմաններն էին, զեկուցողը ցույց տվեց, որ պետության այս կամ այն շրջանի բնակչության հարկային կախումը կենտրոնից պայմանավորված էր «պախտի» և կանոնավոր հարկի վճարմամբ, ընդ որում, պախտ վճարողները /ավելի նվազ կախման մեջ էին, քան կանոնավոր հարկատուները։ Այս առթիվ Հ. Արվայլերը կանգ առավ նաև կայսրության՝ Հայաստանից գանձվող հարկերի տեսակների վրա։

Խոսելով «ռազմական» սահմանների մասին, զեկուցողը կանգ առավ նախ և առաջ բընական սահմանների և նրանց ռազմական կազմակերպության, X դարում ստեղծված «փոքրը» բանակաթեմերի, այսպես կոչված, «հայկական» բանակաթեմերի վրա, ապա սահմանների պաշտպանության գործի վերակառուցման, սահմանամերձ «ամայի», «ոչ ոքի չպատկանող» տարածությունների հարցերի վրա։ Որ զեկուցման վերջում նա նշեց այն խնդիրները, որոնք պետք է հետագա ուսումնասիրության առարկա դառնան. դրանք էին գլխավորապես, Անտիտավրոսի և Եփրատի միջև ընկած տարածության հարցը՝ IX դարի վերջում և X դարի սկզբում, այդ ժամանակաշրջանում գործած հայերի, այդ թվում և նշանավոր Մելիաս-Մլեհի գործունեությունը։ «Հայկական նախաձեռնության շնորհիվ,— նշեց Արվայլերը,— այդ շրջանները աստիճանաբար անցան կայսրության գերիշխանության ներքո։ Մի ակնթարթում X դարի արշալույսին, առանց որևէ ռազմական ճիգի, բյուզանդական սահմանը հասավ մինչև Եփրատ և Մելիտինեի դարպասները։ Լիկանդոս բանակաթեմի կազմակերպումը հենց Մելիասի գործն էր, և հասկանալի է, թե ինչու հայտնի բյուզանդագետներ փորձել են ի դեմս Մելիասի տեսնել այն պատմական անձնավորությունը, որն, իրենց կարծիքով Դիգենիս Ակրիտասի նախատիպն է եղել։

Երկրորդ թեմայի առաջին հարակից զեկուցման մեջ, որի հեղինակներն էին Զ. Վ. Ուռաւցովան, Ա. Պ. Կաժդանը և Հ. Մ. Բարթիկյանը, ցույց էր տրված, որ Բյուզանդական կայսրության արևելյան սահմանը բառիս բուն իմաստով շարժական (դինամիկ) էր ոչ միայն աշխարհագրական իմաստով, այլև փոփոխական՝ սախ և առաջ սոցիալ-քաղաքական իմաստով։ Այստեղ, համաշխարհային երկու հսկա տերությունների միջև, մշտապես գոյություն ունեին անկայուն, այլացեղ պետական կազմավորումներ։ Դրանց առկայությունը կախված չէր բյուզանդական Արևելքի աշխարհագրական պայմաններից, որոնք սեպարատիզմի համար բարենպաստ հող էին ստեղծում։ Բյուզանդական արևելյան սահմանը աստիճանաբար տեղափոխվում էր Մերձեփրատյան տափաստաններից և Ասորիքից, Կովկասյան լեռներից և Տավրոսից դեպի Թալատիայի սարահարթերը։ Չնայած սահմանի աշխարհագրական տեսքի և էթնիկական սուբստրատի փոփոխմանը, անփոփոխ մնաց սահմանամերձ շրջանների սոցիալ-քաղաքական բստրուկտուրան, մնացին մաքր տոհմիկ իշխանությունները։ Այդ յուրահատուկ երևույթի արմատները պետք է փնտրել ոչ թե էթնիկ-աշխարհագրական ոլորտում, այլ սոցիալ-քաղաքական։ Այս կապակցությամբ պահանջ է առաջանում մի անգամ ևս վերանայել պավլիկյան շարժման պատմությունը, որը լոկ դասակարգային բողոք կամ կրոնական աղանդ չի կարելի համարել, քանի որ պավլիկյան անկախ պետության հիմնադրումը Տեֆրիկե կենտրոնով հանդիսանում է անկախ և կիսանկախ իշխանությունների կազմավորման նախակարապետը Բյուզանդիայի արևելքում, մի երևույթ, որ հստակ աչքի է զարնում առաջին խաչակրաց արշավանքի նախօրեին։

Սահմանամերձ նահանգները սոցիալ-քաղաքական իմաստով ազդեցություն ունեին Բյուզանդիայի վրա։ Կոմնենոսների տոհմի մեջ չկա և ոչ մի ընտանիք, որ ծագեր Կոստանդնուպոլսից կամ Հունաստանից։ Նրանց ազգականության մեծամասնությունը Փոքր Ասիայից էր, հատկապես նրա արևելյան նահանգներից։ Վերջապես պետք է մշակվի նաև Բյուզանդիայի վրա սահմանամերձ շրջանների մշակութային ազդեցության հարցը։ Բյուզանդական էպոսը անկասկած ծագել է սահմանամերձ, բազմազգ միջավայրում (հույներ, հայեր, արաբներ)։

Ա. Պերտուզին (Իտալիա) իր զեկուցման մեջ («Պատմության և ավանդության միջև։ Ակրիտասները և դազիները Բյուզանդիայի արևելյան սահմաններում») նախ և առաջ կանգ առավ սահմանապահների՝ ակրիտասների և ապելատների հարցի վրա։ Նշելով, որ սահմանապահ զորքերը ավելի հին շրջանում կոչվում էին լիմիտանեի և կաստրեսիանի, Պերտուզին ցույց տվեց, որ ակրիտասները կարևոր դեր էին խաղում բյուզանդական սահմանների պահպանության գործում։ Այստեղ ծառայում էին նաև վիգլատորներն ու կամինովիգլատորները, որոնց պարտականությունն էր հետևել թշնամու շարժումներին։ Նրանք գլխավորապես հայեր էին։ Սահմանապահները, որ տարբեր անունների տակ են հիշվում (տրապեզիտներ, տասինակներ, խոնսարիոսներ, ապելատներ), Պերտուզիի համոզմամբ, գրեթե հա-

մանիշ հասկացություններ են և նշանակում են օտար ծագում ունեցող զինվորներից բաղկացած վարձկան զորամաս, առավել կամ պակաս չափով անկանոն։

Այնուհետև Պերտուգին անդրադարձավ նախ արաբների, ապա սելջուկ Թուրքերի կողմից Բյուզանդական կայսրության սահմանների վրա օգտագործված սահմանապահներին՝ զազիներին, մանրամասն բնութագրելով ակրիտասների և զազիների դերը, որ նրանք խաղում են բյուզանդական «Դիգենիս Ակրիտաս» (բյուզանդական էպոսում կա լոկ մեկ ակրիտաս. դա Դիգենիսն է) և արաբական «Դելհեմմա» («Հատ ալ Հիմմա») էպոսներում (որտեղ հերոս ալ-Բատտալը կրում է «զազի» մականունը), Թուրքական «Մայլիտ Բատտալ» սիրավեպը, ապա նաև, այսպես կոչված, ակրիտության ցիկլին վերաբերող հունական ժողովրդական երգերը, «Դիգենիս Ակրիտաս» էպոսի հին ռուսական թարգմանությունը («Девгениево деяние») և այլն։ Զեկուցողը անդրադարձավ այդ սահմանապահ հերոսներին տրված նկարագրությանը էպոսներում և պոեմներում և նրանց պատմությանը XI—XII դարերում։

Ն. Իկոնոմիդիսը (Կանադա) հանդես եկավ «Բյուզանդիայի արևելյան սահմանի կազմակերպումը X—XI դարերում և Էսկուրիալի Տակտիկոնը» զեկուցմամբ։ Իկոնոմիդիսը ուսումնասիրության առարկա էր դարձրել Սադրիդի «Էսկուրիալ» պալատի մատենադարանի XI դարի գրչագրում հայտնաբերված «Տակտիկոն» (ռազմական արվեստի մասին երկը)։ Այն կազմված է 970-ական թթ. և բովանդակում է Բյուզանդիայի արևելյան սահմանների, գլխավորապես Հայաստանի մասին բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ։ Այս շրջանում Բյուզանդիայի դեպի արևելք առաջխաղացման կապակցությամբ նկատել է հայերով բնակեցված բազմաթիվ սահմանամերձ «փոքր» բանակաթևմների կազմակերպումը, այդ թվում Խարպեկիկի, Եռգանի, Ամոսատի (Շիմշատ), Կարփնի, Դերջանի, Ցիլիպերտի (զեկուցողի կարծիքով գտնվում էր Արդահանից 11 կմ. դեպի արևելք)։ Զեկուցողը նշեց այն հետաքրքրական փաստը, որ 956 թ. պատերազմական գործողությունների առնչությամբ արաբական աղբյուրները հիշում են Եռգանի զորահրամանատարին, որին «զիրվարա» են կոչում։ Դա ոչ այլ ինչ է, քան հայկական «զորավարա» բառը (վրացական աղբյուրներում Գրիգոր Բակուրյանը Արևելքի «զորվարս» է կոչված)։

Այնուհետև Իկոնոմիդիսը կանգ առավ այդ սահմանամերձ շրջանների վարչական և ռազմական նոր սիստեմի վրա։ Էսկուրիալի փաստաթուղթը ցույց է տալիս, որ այդ սահմանամերձ նահանգների զորքերը գլխավորապես հայերից էին կազմված, և հասկանալի է, թե ինչու այդ նահանգները X դարի կեսերից աղբյուրներում որակվում են որպես «հայկական» բանակաթևմներ, ի տարբերություն «հոռոմականներից»։ Սահմանամերձ շրջաններում «փոքրը» բանակաթևմների ստեղծումը կենտրոնին հնարավորություն էր տալիս ավելի հեշտությամբ զսպավարել դրանք, թույլ չտալ նրանց հանդես գալ կենտրոնական իշխանության դեմ, որն իր հսկողությունը տարածում էր այստեղ դատավորների, ֆինանսական պաշտոնեության և այլոց միջոցով։ Ռազմական հսկողությունը դրված էր կենտրոնից ուղարկվող ծանր հեծելազորի վրա։ Իր զեկուցման վերջում Իկոնոմիդիսը կանգ առավ Բյուզանդիայի կրոնական և հարկային քաղաքականության վրա Հայաստանում, հայերի տեղահանության և այլ բոլորի ազնտալի հետևանքների վրա կայսրության համար։

Երկրորդ թեմայի վերջին հարակից զեկուցման հեղինակն էր Դ. Օրոլենսկին («Բյուզանդական սահմանային գոտիներ և մշակութային փոխհարաբերություններ»)։ Նա գլխավորապես կանգ առավ Բյուզանդիայի արևելաեվրոպական և հյուսիս-պոնտական սահմանամերձ շրջանների վրա (Բալկանյան թերակղզու հյուսիսային մասը, միջին և ստորին Դանուբի շրջանները, Ղրիմի, հայաբ-ռուսական տափաստանների և Սև ծովի հյուսիսային ու հյուսիս-արևելյան մերձափնյա շրջանները)։ Կայսրության փոքրասիական և անդրկովկասյան սահմանների վրա Օրոլենսկին կանգ առավ շատ համառոտակի։ Նա ցույց տվեց, որ Բյուզանդական կայսրության ռազմական սահմանները ավելի շուտ վերացական էին, քան իրական։ Տավրոսի լեռնաշղթան, որ բյուզանդա-արաբական սահմանի ամենից կայուն գոտին էր հանդիսանում VII—X դդ., բաց էր արաբական արշավանքների համար, երկու կողմից անապատ և անմարդաբնակ, ոչ ոքի չպատկանող շրջաններ էին, որոնք, Թեոփանեսի ասելով, տարածվում էին Մոպսուեստիայից մինչև Զորրորդ Հայք։ Իրենց բնույթով մշակութային սահմանները ավելի որոշակի էին, քան ռազմական սահմանները։ Զեկուցողն այնուհետև կանգ առավ բյուզանդական սահմանային գոտիների հարցում աշխարհագրական ֆակտորի խաղացած դերի վրա։

Սահմանամերձ ժողովուրդների մեջ Բյուզանդիայի տնտեսական և մշակութային ազդեցության տարածմանը նպաստում էին քրիստոնյա միսիոներները, որոնցից Օբոլենսկին կանգ առավ կեղծ Զաքարիա Միտիլենացու (VI դ.) հիշած հայկական մի առաքելության վրա Հյուսիսային Կովկասի հոների մոտ, որը հավանաբար օժանդակված էր Հուստինիանոս Ա-ի կառավարության կողմից, ապա Առանից 542 թ. Հյուսիսային Կովկաս գնացած մի հայ եպիսկոպոսի, որը քրիստոնեական համայնք կազմակերպեց սավիրների մեջ։

Ռազմական տեխնիկայի արտահանման, դրամական փոխհարաբերությունների, նյութական բարիքների փոխանակության, տնտեսական արտադրանքի արտահանմանը օժանդակելու հետ միասին, բյուզանդական սահմանային գոտին նպաստում էր նաև քաղաքական իդեալների և ինստիտուտների տարածմանը սահմանամերձ ժողովուրդների մեջ, Բյուզանդիայի և այդ ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների հաստատմանը, այդ ժողովուրդներին կայսրության դաշնակիցների թվում ներգրավելուն և երկրի սահմանները թշնամուց պաշտպանելուն։ Նույն դերն էին խաղում նաև տարբեր ժողովուրդների տեղահանություններն ու գաղթեցումները դեպի երկրի սահմանները, այդ թվում և հայերի գաղթեցումը Թրակիա VIII դարում։

Երկրորդ թեմայի հիմնական զեկուցումներից բացի, այս և մյուս սեկցիաներում բազմաթիվ հաղորդումներ արվեցին, որոնցից հայագիտության հետ կողմնակի կամ անմիջական աղերս ունեին հետևյալները.

Գ. Խարանիս (ԱՄՆ, «Լեզվական սահմանը Փոքր Ասիայում մինչև IX դարի վերջը»), որտեղ ի միջի այլոց ասված էր, որ հայերը շարունակում էին կարևոր դեր խաղալ կայսրության քաղաքական և ռազմական կյանքում, բայց, բացառությամբ Փոքր Ասիայի արևմուտքում մեկուսացած փոքրաթիվ գաղութների, հայերի ազդեցության արևմտյան սահմանը Փոքր Հայքն էր։ Ֆ. Դրաեմ (ԱՄՆ, «Դիգենիս Ակրիտասը» որպես Բյուզանդական կայսրության արևելյան սահմանների պատմության սկզբնաղբյուր»), որտեղ բյուզանդական էպոսի տվյալները գնահատվում են որպես արժանահավատ աղբյուր Բյուզանդական կայսրության արևելյան սահմանների պատմության ուսումնասիրության համար։ Ռ. Ա. Հյուսեինով (ՍՍՀՄ, «Բյուզանդիայի և սելջուկների փոխհարաբերությունները Փոքր Ասիայում XI—XII դդ. ըստ ասորական աղբյուրների»), որտեղ հիմնականում օգտագործված են Միքայել Ասորու, 1234 թ. Անանունի և Բար-Հեբրեոսի ժամանակագրության տվյալները։ Ֆ. Հիլդ (Ավստրիա, «Ճանապարհները և ճանապարհակայանները վերին Եփրատյան նահանգներում»), Վ. Կաեգի (ԱՄՆ, «Խարսիանոն բանակաթեմի քաղաքականությունը»), որտեղ, ի միջի այլոց, ասվում էր, որ 863—872 թթ. միջև ընտեղծված այս բանակաթեմը Կապադովկիայի և Անատոլիկոն բանակաթեմերի դաշնակցությամբ օպոզիցիայի մեջ էր գտնվում Արմենիակների և հայերով բնակեցված այլ շրջանների հետ։ Ա. Սարգիսյան (ԱՄՆ, «Հայերը Բյուզանդական կայսրության արևելյան սահմաններում և Բալկաններում»), որտեղ ընդգծված էր հայերի դերը կայսրության պատմության մեջ, բյուզանդական կայսրերի նվաճողական քաղաքականությունը Հայաստանում, հայերի գաղթեցումները կայսրության տարբեր շրջանները և այդ քաղաքականության աղետալի հետևանքները Բյուզանդիայի համար։ Գ. Կարլին-Հայտեր (Բելգիա, «Տարոնի իշխան Կրիկորիկիոսի մասին»), որտեղ խոսք եղավ հիշյալ իշխանի և Բյուզանդիայի փոխհարաբերությունների էվոլյուցիայի մասին։ Կանգ առնելով այս իշխանի ծագման հարցի վրա, զեկուցողը Հովհաննես Դրասխանակերտցու տվյալների հիման վրա գալիս է այն եզրակացության, որ Տարոնի իշխանը ծագումով Բագրատունի էր։ Մ. Դ. Լորդկիպանիձե (ՍՍՀՄ, «Բյուզանդիայի և Վրաստանի սահմանները»), որտեղ զեկուցողը հիմնականում անդրադարձավ Դավիթ կուրաղապատի իշխանությանը։ Կ. Ն. Յուզբաշյան (ՍՍՀՄ, «Բյուզանդական բանակաթեմերը Հայաստանում X—XI դդ.»)։ Զեկուցողը կանգ առավ հայկական հողերի՝ Բյուզանդիայի կողմից զավթվելու, տեղում բյուզանդական վարչակարգի հաստատման, ինչպես և հայերի շրջանում այդ դարերում տարածում գտած բյուզանդական մի շարք վարչական տերմինների վրա։ Ա. Ստրատոս (Հունաստան, «Կայսրության սահմանները VII դարի ընթացքում»), որտեղ զեկուցողը, ի միջի այլոց, կանգ առավ VII դարի ընթացքում կայսրության սահմանների տատանումների վրա Հայաստանում։ Ֆ. Տիննեֆելդ (ԳՖՀ, «Մելիտենե քաղաքի պատմությունը բյուզանդական տիրապետության վերջին շրջանում, 934—XII դարի սկիզբը»), որտեղ ասվեց քաղաքի՝ հայազգի զորավար Հովհաննես Կուրկուասի կողմից գրավելու, քաղաքում Բյուզանդիայի վարած քաղաքականության մասին, քաղաքի դիրքի մասին Վարդաս Սկլերոսի ապըստամբության ժամանակ, կայսեր և քաղաքի

միարնակ ապգարնակչության գավանարանական վիճերի և պայքարի մասին, վերջապես քաղաքի՝ ժամանակավորապես Փիլարտոս Վարաժնունուն ենթարկվելու մասին և այլն։ Ա. Ալպագո-Նովելլա (Իտալիա, «Գառնահովիտի եկեղեցին (ՀՍՍՀ) և նույնատիպ հուշարձանները»)։ Զեկուցողը կանգ առավ Թալինի մոտ գտնվող այդ եկեղեցու, կենտրոնագմբեթ եկեղեցիների հնագույն նմուշներից մեկի վրա, որի նախատիպը համարում է Ավանի եկեղեցին և ղուդահեռներ անցկացնում Գառնահովիտի և ավելի ուշ շրջանի հուշարձանների (Հռիփսիմեի, Այգեշատի, Արամուսի, Սիսիանի, Ջվարիի և Աղթամարի եկեղեցիների) միջև։ Վ. Ս. Սանդրովսկայա (ՍՍՀՄ, «Էրմիտաժի արճիճե կնիքների հավաքածուի մի քանի նմուշների մասին»)։ Համադրելով կնիքագիտության տվյալները գրավոր աղբյուրների տվյալների հետ, զեկուցողը հանդես է բերում մի շարք նոր փաստեր հայտնի պատմական գործիչների մասին (գլխավորապես հայազգի), այդ թվում Թեոդորականների, Վարազվաչեի, Մուրինյանների և այլոց։ Տ. Ա. Իզմայլովա (ՍՍՀՄ, «Մատենադարանի մի քանի ձեռագրերի պահպանակները XI դարի մանրանկարներով»)։ Զեկուցողը ուսումնասիրության առարկա էր դարձրել Մատենադարանի № № 963, 4435 և 10147 ձեռագրերի պահպանակների մանրանկարները, որոնք ուսումնասիրողների կողմից համարվում են հայկական արվեստի «բյուզանդական» ուղղությանը պատկանող։ Վ. Ա. Հարությունովա (ՍՍՀՄ, «Փիլարտոս Վարաժնունու քաղաքական գործունեությունը Բյուզանդիայի հարավ-արևելյան շրջաններում»)։ Զեկուցողը ուսումնասիրել է Փիլարտոս Վարաժնունու իշխանության ծագման և վերացման պատճառները։ Դ. Վալոտա և Հ. Վահրամյան (Իտալիա, «Հայերի հաստատումը ռումինական հողերի վրա»)։ Զեկուցողները ցույց տվեցին, թե ինչպես Բյուզանդիայի կողմից հայկական հողերի գրավումից հետո հայերը ըստ տիպված տարբեր ժամանակներում արտագաղթում էին օտար երկրներ, այդ թվում և Ռումինիա, ստեղծում ինքնավար գաղութներ և լայն շինարարական գործունեություն ծավալում (հատկապես Սուչավայում, Ցաշում, Բոտոշանում, Ռոմանում, հետագայում՝ նաև Ցոշանում, Տրրդու-Օկնայում, Բակրուում, Դալացում, Զետատեա-Ալբայում), հայկական ճարտարապետության և կերպարվեստի աղդեցությունը տարածելով ռումինականի վրա։

Ռումինական Սոցիալիստական Հանրապետության արվեստի թանգարանում կոնգրեսի մասնակիցների համար կազմակերպվել էր հատուկ ցուցահանդես՝ «Բյուզանդական կուլտուրան Ռումինիայում» թեմայով։ Կազմակերպվեցին նաև էքսկուրսիաներ դեպի միջնադարյան մայրաքաղաքներ Կուրտեա դե Արջեշ և Տրրդովիշտե։

Կոնդրեսի աշխատանքների վերջում Բյուզանդագետների Միջազգային Ասոցիացիայի նախագահ ընտրվեց Դ. Զակիթինոսը (Հունաստան), գլխավոր քարտուղար՝ Ա. Պերտուզին (Իտալիա)։ Որոշվեց բյուզանդագետների հերթական XV կոնգրեսը գումարել Նիկոզիա քաղաքում (Կիպրոս)։

Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ